

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

ՀՀ Շահումյանի «Ագրոսպասարկում»

ԲԲԸ գիտատեխնիկական խորհրդի նախագահ՝

Մ.Ա. Պողոսյան

“27” մայիսի 2021թ.



ԿԱՐԾԻՔ

Առաջարկար կազմակերպության՝ ՀՀ Շահումյանի «Ագրոսպասարկում» ԲԲԸ, Գոռ Մելիքի Եղիազարյանի «Ջրային միջավայրի բույսերի հավաքման թրթռակտրոլ ապարատի մշակում» թեմայով արենախոսության վերաբերյալ, ներկայացված ԲՈԿ-ի 033 մասնագիտական խորհրդի Ե.20.01- «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությամբ տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի հայցման համար:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԹԵՄԱՅԻ ԱՐԴԻԱԿԱՆՈՒԹՅՈՒՆԸ

Ատենախոսական թեման արդիական է: Այն նվիրված է շատ կարևոր հիմնահարցի լուծմանը՝ ջրամբարների ու ջրանցքների ջրային խիտ միջավայրում ջրային բույսերի, հատկապես եղեգի, ցողունների կտրման գործընթացի մեքենայացմանը:

ԳԻՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ՀԵՂԻՆԱԿԻ

ԿՈՂՄԻՑ ՍՏԱՅՎԱԾ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆՆ ՈՒ

ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Հնձիչ մեքենաների կտրող ապարատների կառուցվածքների շահագործական ցուցանիշների վերլուծությունը ցույց է տվել, որ ջրային խիտ միջավայրում բույսերը, հատկապես եղեգը, կտրելու համար պիտանի չեն: Ուստի նշված պայմաններում բույսերի կտրումն իրականացնելու համար հայցորդը առաջարկել է նոր կտրող ապարատ, որի աշխատանքի սկզբունքը վիբրացիոն կտրումն է: Տեսական հետազոտություններով ստացվել են չտատանվող և տատանվող դանակների

(սղոցատամ ու հարթ սայրով) պարամետրերը որոշող հավասարումներ, այնուհետև ստացված պարամետրերը օպտիմալացվել են գիտափորձերով: Ստացված արդյունքների հիման վրա կոնստրուկտորները կարող են հաշվարկել և նախագծել վիբրոդանակով մեքենայի արտադրական նմուշը:

ԱՏԵՆԱԽՈՍՈՒԹՅԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՆԵՐԴՐՈՒՄԸ

Ատենախոսության գիտագործնական նշանակությունը կայանում է նրանում, որ առաջին անգամ է ջրային միջավայրում կատարվում վիբրոդանակով եղեգի կտրման հետազոտության աշխատանքները և ստացված արդյունքները հավաստի են: Հնարավոր է ստացված պարամետրերով պատրաստել ջրային բույսերը վիբրոդանակով կտրող մեքենա: Ըստ հայցորդի հայտարարության ՀԱԱՀ-ին կից գյուղատնտեսության մեքենայացման և էլեկտրիֆիկացման գիտահետազոտական ինստիտուտ են հանձնվել աշխատանքային օրգանի, ընդհանրապես մեքենայի բոլոր անհրաժեշտ օպտիմալացված պարամետրերը մեքենայի նմուշը պատրաստելու, արտադրական փորձարկումները կատարելու և ներդրման աշխատանքները կազմակերպելու համար:

ԱՏԵՆԱԽՈՍԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ

Ատենախոսությունը բաղկացած է ներածությունից, 5 գլուխներից, ընդհանուր եզրակացություններից, օգտագործված գրականության ցուցակից 101 անվանումով և 21 հավելվածներից: Այն շարադրված է 125 էջի վրա, ընդգրկում է 35 նկար և 9 աղյուսակ:

Ներածությունում հիմնավորված է թեմայի արդիականությունը և բերված են պաշտպանության ներկայացվող հիմնական դրույթները:

Առաջին գլխում ներկայացված են հաստացողուն մշակաբույսերի կտրող ապարատների կառուցվածքի վերլուծությունը և համեմատական գնահատականը: Ուսումնասիրելով վիբրացիան և վիբրացիոն գործընթացների նշանակությունը, հայցորդը համոզվել է, որ ջրային խիտ միջավայրում բույսերը, հատկապես եղեգը,

կտրելու համար նպատակահարմար է օգտագործել վիբրացիան: Դրանում համոզվելու համար վերլուծել է այդ ուղղությամբ կատարված հետազոտությունների արդյունքները, կատարել համապատասխան եզրակացություններ և շարադրել է հետազոտությունների նպատակն ու հիմնական խնդիրները:

Երկրորդ բաժնում կատարվել են տեսական հետազոտություններ՝ առաջին դեպքում ջրային խիտ միջավայրում բույսերի ցողունների առանց վիբրացիայի կտրման համար և նույն միջավայրում ցողունները վիբրացիայով կտրման պայմանների համար: Տեսական հետազոտությունների բաժինը կատարված է բարձր մաթեմատիկական մակարդակով: Պարամետրերի հաշվարկային արդյունքները հավաստի են, որովհետև գիտափորձերով ստուգվել և օպտիմալացվել են:

Տեսական հետազոտությունների առաջին մասում, երբ դանակը վիբրացիայով չէր աշխատում, հաշվարկները ցույց են տվել, որ հիդրոդինամիկական դիմադրության ազդեցությունն ավելանում է մոտ 5 անգամ: Հասկանալի է, որ այդպես էլ պետք է լիներ:

Երրորդ բաժնում ներկայացված են գիտափորձնական հետազոտությունների ծրագիրը, օբյեկտը և մեթոդիկան:

Ստանդարտ մեթոդներով որոշվել են հաստացողուն մշակաբույսերի ցողունների ֆիզիկամեխանիկական հատկությունները: Արդյունքները ներկայացված են աղյուսակների և գրաֆիկների ձևով: Ստացված տվյալները օգտագործվել են կտրող ապարատի պարամետրերը հաշվարկելու համար:

Տեսական հետազոտություններից ստացված պարամետրերի արժեքները ստուգելու և օպտիմալացնելու գիտափորձերը կատարելու համար կառուցվել է հատուկ տեղակայանք՝ ստեղծվել է ջրային միջավայր և լաբորատոր պայմաններում հաստատվել է վիբրոկտրման ակնհայտ առավելությունները:

Մշակվել են գիտափորձնական հետազոտությունների կատարման մեթոդները:

Օգտագործվել է գիտափորձերի պլանավորման մեթոդը, որը հիմնված է մաթեմատիկական վիճակագրության և հավանականության տեսության մեթոդների և

սկզբունքների վրա, որոնք հնարավորություն են տալիս կրճատելով կատարվող փորձերի քանակը, ստանալ բարձր ճշտությամբ արդյունքներ:

Չորրորդ բաժնում ներկայացված են գիտափորձնական հետազոտությունների արդյունքները և դրանց վերլուծությունը:

Ըստ մշակված մեթոդների լաբորատոր արժեքի վրա սղոցատամ և հարթ սայրով վիբրոդանակների փորձարկման արդյունքները մաթեմատիկական վիճակագրական և գիտափորձերի պլանավորման մեթոդներով մշակելուց հետո ստացվել են համապատասխան ռեգրեսիայի հավասարումները և արձագանքի մակերևույթի կորերի ընտանիքի գրաֆիկներ: Դրանք հնարավորություն են տվել հաշվարկել և օպտիմալացնել նոր առաջարկվող՝ ջրային խիտ միջավայրում վիբրոդանակով ջրային բույսերի (եղեգի) ցողունները կտրող ապարատի պարամետրերը:

Ընդհանրապես այս բաժնում հետազոտություններից ստացված բոլոր արդյունքներն ունեն գիտագործնական նշանակություն:

Հինգերորդ բաժնում ներկայացված է հետազոտությունների գիտագործնական արդյունքների տեխնիկատնտեսական արդյունավետության հիմնավորումը: Դրա համար որպես նախատիպ ընտրվել է ռոտորային հնձիչ ապարատը:

Ատենախոսության վերջում բերված են ընդհանուր եզրակացությունները և առաջարկությունները: Ընդհանուր առմամբ կատարված է կարևոր նշանակություն ունեցող հետազոտական աշխատանք և արդյունքները պիտանի են գիտության և արտադրության համար:

Ատենախոսության վերաբերյալ կան հետևյալ դիտողությունները:

1. Ատենախոսական աշխատանքի կատարման սկզբում ու ընթացքում հայցորդը ներկայացրել էր, որ գոյություն ունեցող հնձիչ մեքենաները, այդ թվում նաև ռոտորայինը, չեն կարողանում հաստացողուն բույսերը կտրել, ծամում են, մաքուր կտրում չեն ապահովում: Այդ դեպքում ռոտորայինի հետ համեմատելու տեխնիկատնտեսական արդյունավետության ցուցանիշների հաշվարկման իմաստը ո՞րն է:

2. Ատենախոսությունում նշվում է, որ եղեգ ու մյուս ջրային բույսերը ստեղծում են կոպիտ կերերի բազա: Շատ է ուռչացված: Ընդամենը կարելի է օգտագործել որպես անասնակեր:

3. Ատենախոսության արդյունքները շատ կարևոր գիտագործնական նշանակություն ունեն, անհրաժեշտ է այդ նյութերը ներկայացնել համապատասխան նախարարություններ արտադրությունը կազմակերպելու և ներդնելու համար:

Արված դիտողությունները սկզբունքային չեն և բոլորովին բացասաբար չեն ազդում ատենախոսության որակի վրա: Կատարված է լուրջ գիտական և գյուղատնտեսական արտադրության համար օգտակար աշխատանք:

ԵԶՐԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ


Գոռ Մելիքի Եղիազարյանի ատենախոսությունը հանդիսանում է ավարտուն գիտական աշխատանք, որտեղ հեղինակի կողմից կատարված հետազոտությունների հիման վրա լուծվում է ջրային խիտ միջավայրում հաստացողուն ջրային բույսերի, հատկապես եղեգի կտրման մեքենայացման խնդիրը:


Սեղմագրում արտացոլված է ատենախոսության հիմնական բովանդակությունը: Ատենախոսության հիմնական դրույթներն իրենց արտացոլումն են գտել նաև հեղինակի կողմից հրատարակված հոդվածներում:


Ատենախոսությունը բավարարում է ՀՀ գիտական աստիճանաշնորհման կանոնակարգի 7-րդ կետի, ինչպես նաև ՀՀ ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, համապատասխանում է Ե.20.01- «Գյուղատնտեսական արտադրության մեքենայացում և մեքենաներ» մասնագիտությանը, իսկ ատենախոսության հեղինակը՝ Գոռ Մելիքի Եղիազարյանը արժանի է տեխնիկական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի շնորհմանը:

Առաջատար կազմակերպության կարծիքը քննարկվել է ՀՀ Շահումյանի «Ազրոսպասարկում» ԲԲԸ գիտատեխնիկական խորհրդի 2021թ. մայիսի 27-ին

կայացած նիստում (արձանագրություն թիվ 1), մասնակցությամբ՝ տեխնիկական գիտությունների դոկտորներ՝ Ս.Մարգարյանի (խորհրդի նախագահի տեղակալ), Ա.Կոխլիկյանի, գյուղատնտեսական գիտությունների դոկտորներ՝ Գ.Գիլոյանի (խորհրդի գիտական քարտուղար), Ա.Մելիքյանի, տեխնիկական գիտությունների թեկնածուներ՝ Օ.Հովհաննիսյանի, Ա.Հարությունյանի, Ս.Պապյանի, Գ.Դանիելյանի, Ա.Ռաֆայելյանի:

Կոխլիկյան Ա., տ.գ.դ.՝ 

Պապյան Ս., տ.գ.թ.՝ 

Դանիելյան Գ., տ.գ.թ.՝ 

Ա.Կոխլիկյանի, Ս.Պապյանի, Գ.Դանիելյանի ստորագրությունների իսկությունը հաստատում եմ՝

Գիտատեխնիկական խորհրդի
քարտուղար, գյուղ. գիտ. դոկտոր՝



Գ.Հ. Գիլոյան